# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«30» հունիսի 2023 թվականի N 1677-Ա

### ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ՝ ԿԱՐԻՆԵ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի կողմից ահազանգ է ստացվել, որ բռնության է ենթարկվել անչափահաս՝ 02.12.2005 թվականին ծնված Կարինե Միքայելի Անդրիասյանը (ծննդյան վկայական՝ ԱԱ №077438) իր հոր՝ Միքայել Մանվելի Մնոյանի կողմից:

Ըստ Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի, Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի և «Կանանց իրավունքների տուն» ՀԿ-ի կողմից անչափահաս՝ Կարինե Միքայելի Անդրիասյանի հետ ունեցած հարցազրույցներից պարզվել է, որ հոր՝ Միքայել Մանվելի Մնոյանի և իր դստեր՝ Կարինե Միքայելի Անդրիասյանի փոխհարաբերությունները մշտապես եղել են լարված, հայր-երեխա հուզական կապը խզված է եղել:

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Կարինե Միքայելի Անդրիասյանի մոր՝ Նելլի Հակոբի Անդրիասյանի հայտարարությունից պարզվեց, որ ընտանիքի անդամների և վերջինիս միջև տարբեր պատճառներով եղել են տարաձայնություններ:

Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի կողմից անցկացվել է Կարինե Միքայելի Անդրիասյանի ընտանիքի սոցիալական կարիքի գնահատում և ներկայացվել է եզրակացություն:

Ի նկատի ունենալով անչափահաս՝ Կարինե Միքայելի Անդրիասյանի տարիքային, հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունները, շփման և հուզական կապի բացակայությունը և հոր և մոր միջև, բացառելով ընտանիքում առաջացած ռիսկային իրավիճակները, ինչպես նաև Կարինե Միքայելի Անդրիասյանի կարծիքը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 28-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Անչափահաս՝ 02.12.2005 թվականին ծնված Կարինե Միքայելի Անդրիասյանի ( ծննդյան վկայական՝ ԱԱ №077438)՝ հետագա խնամքը և դաստիարակությունը կազմակերպել «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում և տրամադրել շուրջօրյա խնամք:

30.06.2021

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2023 **թվականի** N 1676-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԼՈՒՍԱՍՏՂԻԿ - ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ԵՎ <<ԼԱՊՏԵՐԻԿ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 1-ին, 6-րդ և 10-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Լուսաստղիկ - մսուր մանկապարտեզ>> և <<Լապտերիկ - մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) 2023 թվականի օգոստոսի 24-ին ժամը 11:00-ին և հաստատել մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին օրենքով սահմանված կարգով՝

1) կազմակերպել և իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները,

2) կարգի համաձայն ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթ անցկացնելու մասին հայտարարության հրապարակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2023

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2023 թվականի ________ի N ____-Լ որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Լուսաստղիկ- մսուր մանկապարտեզ>> և <<Լապտերիկ- մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Տնօրենի թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Լուսաստղիկ-մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն | 1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր բավարարում են՝<br>1) <<Նախադպրոցական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին<br>2) Իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):<br><br>2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝<br>1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.<br>2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.<br>3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.<br>4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.<br>5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.<br>6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:<br><br>**Տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ սույն հայտարարության 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային Հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պայմանները:** | Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն չի կարող ընտրվել, նշանակվել այն անձը, որը՝<br>1) <<Նախադպրոցական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով չի ստացել նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.<br>2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>3) դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>4) ունի այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը.<br>5) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:<br>6) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.<br>7) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ կեղծ են.<br>7) 65 տարին լրացած քաղաքացիները: | 1) դիմում.<br>2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.<br>3) բաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.<br>4) ինքնակենսագրություն.<br>5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.<br>6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.<br>7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):<br><br>**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| 2. | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Լապտերիկ-մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն | | | |

| Մրցույթներն անցկացնելու վայրը, օրը, ժամը, | Դիմումների և փաստաթղթերի ընդունումը | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը |
|---|---|---|
| վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ<br>օրը՝ 2023 թվականի օգոստոսի 24-ին<br>ժամը՝ 11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ և հարցաշարերը ստանալու համար դիմել<br>Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ, հեռ 0312-2-22-18),<br>ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի ոչ աշխատանքային օրերից | 2023 թվականի օգոստոսի 14-ը ներառյալ: |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<30>> հունիսի 2023 թվականի N 1675-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆՆԱ ՀՐԱՉԻԿԻ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, ցանկի 16-րդ կետով և հիմք ընդունելով Աննա Հրաչիկի Մեքինյանի 2023 թվականի հունիսի 29-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ Աննա Հրաչիկի Մեքինյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2023 թվականի հուլիսի 7-ից:

2.Ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 4 աշխատանքային օր՝ 2023 թվականի հուլիսի 7-ից 12-ը ներառյալ:

3. Ամենամյա լրացուցիչ արձակուրդի ընթացքում Աննա Հրաչիկի Մեքինյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Հասմիկ Մելսիկի Սամսոնյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Հրաչիկի Մեքինյանին և Հասմիկ Մելսիկի Սամսոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

<< 30 >> հունիսի 2023 թվականի N 1674-Ա

## <<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՎԱՐԴԱՆ ԼՅՈՎԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Սեպուհի Ջանոյանի 2023 թվականի հունիսի 29-ի զեկուցագիրը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** << Գյումրու քաղաքային ճանապարհներ >> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ Վարդան Լյովայի Կարապետյանի աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը ներառյալ:

**2.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Լյովայի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.06.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<_30_>>_հունիսի_ 2023 թվականի N _1673_-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵԴՈՆԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Սեպուհի Ջանոյանի 2023 թվականի հունիսի 29-ի զեկուցագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Գյումրի համայնքի ներդրումային ծրագրի փորձագետ Վարդան Մակեդոնի Ալթունյանի աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը ներառյալ:

**2.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Մակեդոնի Ալթունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<30>> հունիսի 2023 թվականի N 1672-Ա

### <<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՇՈՏ ԲԵԺԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Սեպուհի Ջանոյանի 2023 թվականի հունիսի 29-ի զեկուցագիրը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.**<< Գյումրու քաղաքային ճանապարհներ >> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ Աշոտ Բեժանի Գալստյանի աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը ներառյալ:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Բեժանի Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

<<30>> հունիսի 2023 թվականի N 1671-Ա

### <<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՀՐԱՉՅԱ ՄՈՒԿՈՒՉԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Սեպուհի Ջանոյանի 2023 թվականի հունիսի 29-ի զեկուցագիրը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.<<Գյումրու քաղաքային ճանապարհներ>> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ Հրաչյա Մուկուչի Մելքոնյանի աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը ներառյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրաչյա Մուկուչի Մելքոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<30>> հունիսի 2023 թվականի N 1670-Ա

### <<ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ>> ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԵՐԱՆ ԺԻՐԱՅՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երան Ժիրայրի Գրիգորյանի 2023 թվականի հունիսի 30-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Ապրելու երկիր>> խմբակցության փորձագետ Երան Ժիրայրի Գրիգորյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի հուլիսի 4-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2023 թվականի հուլիսի 4-ից 18-ը ներառյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երան Ժիրայրի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.06.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

***«30» նոյեմբերի 2023 թվականի N1669-Ա***

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՎԱՀԱՆԻ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ N16 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 66.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ 5 (ՀԻՆԳ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 299.13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գագիկ Վահանի Սաֆարյանին պատկանող Գյումրի քաղաքի Դանիելյան փողոց N16 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 66.39( վաթսունվեց ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններ, ինքնակամ բացված է 1 (մեկ) պատուհան, 5 (հինգ) դուռ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 299.13 (երկու հարյուր իննսունինը ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Գագիկ Վահանի Սաֆարյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 20238WF2XQ, 2023789JHB ծածկագրերը, քաղաքացի Գագիկ Վահանի Սաֆարյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N24358 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Գագիկ Վահանի Սաֆարյանի (ծնված 1957 թվականի հունիսի 22-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Դանիելյան փողոց N16 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 299.13 (երկու հարյուր իննսունինը ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Դանիելյան փողոց N16 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 66.39( վաթսունվեց ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1 (մեկ) պատուհանը և 5 (հինգ) դուռը ճանաչել օրինական, տեղական տուրքի ենթակա է գանձման 11814 (տասնմեկ հազար ութ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գագիկ Վահանի Սաֆարյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## *ՈՐՈՇՈՒՄ*

*«30» հունիսի 2023 թվականի N 1668-Ա*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԻ ՓՈՂՈՑ N 2 ՀԱՍՑԵԻ 204.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 274.56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (220.97ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Սահմանապահների փողոց N 2 հասցեի 204.4 ( երկու հարյուր չորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 274.56(երկու հարյուր յոթանասունչորս ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (220.97(երկու հարյուր քսան ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Գարիկ Մանիկյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023J53WLS ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Սահմանապահների փողոց N2 հասցեի 204.4 ( երկու հարյուր չորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 274.56(երկու հարյուր յոթանասունչորս ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (220.97(երկու հարյուր քսան ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Գարիկ Մանիկյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

30.06.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

***«30» նոյեմբերի 2023 թվականի N 1667-Ա***

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ՏԱՏՅԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N7/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 327.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (270.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Գագիկ Մկրտչյանին և Տատյանա Մկրտչյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց N7/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 327.12 (երեք հարյուր քսանյոթ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (270.5(երկու հարյուր յոթանասուն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն:

Քաղաքացի Գագիկ Մկրտչյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 17.02.2023 թվականի վճիռը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2022TI5R0T ծածկագիրը և քաղաքացի Գագիկ Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականին N21619 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Գագիկ Մկրտչյանին և Տատյանա Մկրտչյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց N7/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 327.12 (երեք հարյուր քսանյոթ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (270.5(երկու հարյուր յոթանասուն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական տուրքը ենթակա է գանձման 757610 (յոթ հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2023 թվականի N 1666-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՆՏ ՆԵՐՍԵՍԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ 29,73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 26-ին կազմակերպվել է Ս.Մատնիշյան փողոց N 34/5 հասցեով (ծածկագիր 08-001-1323-0057) 29,73 (քսանինը ամբողջ յոթանասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Հրանտ Ներսեսի Ներսիսյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 410 000 (չորս հարյուր տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 47):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ս.Մատնիշյան փողոց N 34/5 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 29,73 (քսանինը ամբողջ յոթանասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-1323-0057) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Հրանտ Ներսեսի Ներսիսյանին բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Հրանտ Ներսեսի Ներսիսյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Հրանտ Ներսեսի Ներսիսյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել բնակելի տուն կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հրանտ Ներսեսի Ներսիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 ; Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» նոյեմբերի 2023 թվականի N 1665-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒՍՏԱՄ ԱՐՏԱՇԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ 786,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 26-ին կազմակերպվել է Պ.Պռոշյան փողոց N 58/1 հասցեով (ծածկագիր 08-001-1248-0039) 786,3 (յոթ հարյուր ութսունվեց ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Ռուստամ Արտաշեսի Սարգսյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 27 525 000 (քսանյոթ միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 44):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Պ.Պռոշյան փողոց N 58/1 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 786,3 (յոթ հարյուր ութսունվեց ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-1248-0039) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Ռուստամ Արտաշեսի Սարգսյանին սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Ռուստամ Արտաշեսի Սարգսյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Ռուստամ Արտաշեսի Սարգսյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել սպասարկման օբյեկտ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռուստամ Արտաշեսի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ X Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբերի 2023 **թվականի** N 1664-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՔՐԻՍՏԻՆԵ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ 32,64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 26-ին կազմակերպվել է Մուշ-2 թաղամաս N 29/11 հասցեով (ծածկագիր 08-001-0128-0015) 32,64 (երեսուներկու ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Քրիստինե Բենիամինի Հովսեփյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 153 408 (մեկ հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 48):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Մուշ-2 թաղամաս N 29/11 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 32,64 (երեսուներկու ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0128-0015) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Քրիստինե Բենիամինի Հովսեփյանին ավտոտնակ կառուցելու նպատակով:

2. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Քրիստինե Բենիամինի Հովսեփյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Քրիստինե Բենիամինի Հովսեփյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել ավտոտնակ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Քրիստինե Բենիամինի Հովսեփյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունիսի 2023 **թվականի** N 1663-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՒՇԵՂ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ 2312,49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 26-ին կազմակերպվել է Հացիկի խճուղի N 7 հասցեով (ծածկագիր 08-001-0502-0129) 2312,49 (երկու հազար երեք հարյուր տասներկու ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Մուշեղ Մնացականի Մանուկյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 9 250 000 (ինը միլիոն երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 45):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հացիկի խճուղի N 7 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 2312,49 (երկու հազար երեք հարյուր տասներկու ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0502-0129) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Մուշեղ Մնացականի Մանուկյանին պահեստներ կառուցելու նպատակով:

2. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Մուշեղ Մնացականի Մանուկյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Մուշեղ Մնացականի Մանուկյանին.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման» կարգի համաձայն պատվիրել պահեստներ կառուցելու նախագծային փաստաթղթեր, ստանալ շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Հողամասն ըստ գործառական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետում շինարարական աշխատանքներն չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ և օրենքով սահմանված կարգով հողամասը ետ կվերցվի:

5. «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի համաձայն տվյալ հողամասի հողի հարկը ենթակա է գանձման, ելնելով հողի կադաստրային արժեքից և կադաստրային արժեքի փոփոխման դեպքում այն ենթակա է վերանայման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մուշեղ Մնացականի Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.06.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. Փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2023 թվականի N 1662-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ 4855,34 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 26-ին կազմակերպվել է Հացիկի խճուղի N 5/4 հասցեով (ծածկագիր 08-001-0502-0127) 4855,34 (չորս հազար ութ հարյուր հիսունհինգ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Քաղաքացի Արթուր Արամայիսի Արշակյանը մասնակցելով նշված հողամասի օտարման աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 19 425 000 (տասնինը միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (արձանագրություն N 42):

Հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, և 70-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության N 286 որոշման 5-րդ բաժնի 22-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հացիկի խճուղի N 5/4 հասցեով, համայնքային սեփականություն հանդիսացող 4855,34 (չորս հազար ութ հարյուր հիսունհինգ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը (ծածկագիր 08-001-0502-0127) սեփականության իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթող ճանաչված Արթուր Արամայիսի Արշակյանին պահեստներ կառուցելու նպատակով:

2.Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Արթուր Արամայիսի Արշակյանի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել քաղաքացի Արթուր Արամայիսի Արշակյանին.
